Վասյուկի

Ժամանակի սահմանափակում՝ 0.3 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Վասյուկի քաղաքի շախմատային ակումբի անդամները Օստապ Բենդերի փախուստից հետո վերադարձան ակումբ և գտան ամեն ինչ տակն ու վրա արված: Նրանք հավաքեցին շախմատի քարերը: Պարզվեց, որ շատ խաղաքարեր պակասում են՝ կորել են կամ մնացել են Օստապ Բենդերի գրպանում: Գրել ծրագիր, որը հաշվի, թե առավելագույնը շախմատի խաղաքարերի քանի լրիվ հավաքածու կհավաքեն շախմատի սիրահարները, եթե հայտնի է, թե սև և սպիտակ խաղաքարերից յուրաքանչյուրից քանի հատ են նրանք գտել: Հիշեցնենք, որ շախմատի լրիվ հավաքածուն պարունակում է սև և սպիտակ մեկական թագավոր և թագուհի, երկուական նավակ, փիղ և ձի, ութական զինվոր:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է `6` թիվ՝ սպիտակ թագավորների, թագուհիների, նավակների, փղերի, ձիերի և զինվորների քանակները: Երկրորդ տողում տրված է `6` թիվ՝ սև թագավորների, թագուհիների, նավակների, փղերի, ձիերի և զինվորների քանակները: Մուտքային տվյալները `1000`-ին չգերազանցող ոչ բացասական ամբողջ թվեր են:

Ելքային տվյալներ

Արտածել մեկ թիվ՝ շախմատի քարերի լրիվ հավաքածուների քանակը:

Օրինակ

Մուտք	**Ելք**
`2 3 4 5 6 20` `3 2 5 6 4 18`	`2`